Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2021թ. մայիսի 20-ի թիվ 5 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«20» մայիսի 2021թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

I. Ընդհանուր դրույթներ

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և կարիերայի հնարավորությունների զարգացման քաղաքականությունը բխում է ԳՊՀ առաքելությունից և կազմում է Համալսարանի ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մասը:

2. Համալսարանի ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և կարիերայի հնարավորությունների զարգացման քաղաքականության հիմունքները (այսուհետ՝ նաև հիմունքներ) համապատասխանում են ՀՀ բարձրագույն կրթության և գիտության ոլորտը կարգավորող օրենքներին, Համալսարանի կանոնադրությանը, այլ իրավական ակտերին:

II. Համալսարանի ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և կարիերայի հնարավորությունների զարգացման քաղաքականության հիմնական նպատակները

3. Համալսարանի ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և կարիերայի հնարավորությունների զարգացման քաղաքականության հիմնական նպատակներն են ապահովել Համալսարանում սովորող և ԳՊՀ բոլոր մասնագիտական կրթական ծրագրերն ավարտած անձանց մրցունակությունը և հնարավորինս նպաստել նրանց համապատասխան աշխատանքով ապահովելու գործընթացին:

4. Համալսարանի ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և զբաղվածության ապահովմանը նպաստելու քաղաքականությունը ներառում է կարիերայի կենտրոնի աշխատանքների ծրագրումն ու կազմակերպումը, ինչպես նաև համագործակցությունը զբաղվածության գործակալությունների, աշխատանքի տեղավորման տեսչությունների և գործատուների հետ:

III. Համալսարանի ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և կարիերայի հնարավորությունների զարգացման քաղաքականության հիմնական ուղղությունները

5. Համալսարանի ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և զբաղվածության ապահովմանը նպաստելու քաղաքականության հիմնական ուղղություններն են.

1/Համալսարանի թափուր հաստիքների զբաղեցումը ԳՊՀ շրջանավարտների կողմից,

2/ աշխատաշուկայի ուսումնասիրությունները, կրթական ծրագրերից և դրանց ելքային արդյունքներից, ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական, ընդհանրական իրազեկություններից գործատուների բավարարվածության ուսումնասիրությունը,

3/ գործատուների հետ համագործակցության մասին պայմանագրերի կնքումը, գործընկերային ծրագրերի իրականացումը,

4/ ՀՀ Գեղարքունիքի մարզում առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը ԳՊՀ ուսանողներին և շրջանավարտներին,

5/ գործատուներին ԳՊՀ շրջանավարտ-մասնագետների երաշխավորումը,

6/ Համալսարանի շրջանավարտների բնութագրերի ուղարկումը համապատասխան գործակալություններ և աշխատավայրեր,

7/մասնագիտական կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացում շրջանավարտների և գործատուների ներգրավումը՝ ծրագրի որակի և աշխատաշուկայի պահանջների համապատասխանության գնահատման ու բարելավման նպատակներով,

8/ պրակտիկայի վայրերի ճիշտ ընտրությունը և պրակտիկաների ավարտին շրջանավարտներին հնարավորինս աշխատանքի տեղավորումը,

9/ տվյալ մասնագիտության (մասնագիտացման) գծով տարածաշրջանում հիմնական գործատուների և Համալսարանի միջև նոր կապերի հաստատումը,

10/ շրջանավարտների գործնական պատրաստակամության բարելավումը, արտադրական պրակտիկայի արդյունավետության բարձրացումը և պրակտիկաների վայրերի բազմազանեցումը, պատվիրատու կազմակերպություններում ավարտական կուրսերի ուսանողների՝ ուսուցման հետ համատեղ արտադրական փորձառության ձեռք բերման հնարավորությունների ընդլայնումը,

11/ վերապատրաստումների, լրացուցիչ կրթական ծրագրերի, որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպումը,

12/ այլ ծրագրերի շարունակական իրականացումը:

IV. Համալսարանի ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և կարիերայի հնարավորությունների զարգացման հիմնական միջոցները

6. Ուսումնառության տարիներին խրախուսվում է Համալսարանի ուսանողների և ԳՊՀ շրջանավարտների ներգրավումը տարբեր ծրագրերի իրականացմանը՝ աշխատանքային հմտությունների և փորձի ձեռքբերման ու զարգացման նպատակով:

7. Համալսարանն աջակցում է ԳՊՀ շրջանավարտների զբաղվածության խնդրի լուծմանը՝ Համալսարանի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրությանը համապատասխան՝ սույն հիմունքների 5-րդ կետում նախատեսված Համալսարանի շրջանավարտների զբաղվածության ապահովմանը նպաստելու քաղաքականության հիմնական ուղղություններով:

8. Համալսարանի բակալավրիատի կրթական աստիճանում սովորած և համապատասխան մասնագիտության գծով որակավորում ստացած անձինք կրթությունը կարող են շարունակել մագիստրատուրայի կրթական աստիճանում՝ մագիստրատուրայի ընդունելության կարգի համաձայն:
9. Համալսարանի մագիստրատուրայի կրթական աստիճանում սովորած և համապատասխան մասնագիտության գծով որակավորում ստացած անձինք կրթությունը կարող են շարունակել ասպիրանտի կարգավիճակում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
10. Համալսարանի շրջանավարտներն իրավունք ունեն սահմանված կարգով ստանալու երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ առկա կամ հեռակա ուսուցման ձևերով ինչպես նաև մասնակցելու Համալսարանում կազմակերպվող լրացուցիչ կրթական ծրագրերին:
11. Համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտներին սահմանված կարգով շնորհվում են դիպլոմ և դիպլոմի միասնական հավելված՝ Եվրոպական հանձնաժողովի, Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մշակված ձևաչափին համապատասխան՝ հայերեն և անգլերեն լեզուներով՝ Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ուսումնառությունը շարունակելու հնարավորություն ընձեռելու նպատակով, հիմք ընդունելով կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական (ECTS) համակարգը:
12. Համալսարանը ՀՀ Որակավորումների փոխճանաչման ազգային կենտրոնի հարցման հիման վրա հաստատում է Համալսարանի նախորդ տարիների շրջանավարտների, այդ թվում ՝ դիպլոմավորված մասնագետների դիպլոմների վավերականությունը:
13. Համալսարանի ուսանողների և շրջանավարտների կարիերայի հնարավորությունների զարգացման քաղաքականությունը ներառում է.
1/մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների շարունակական խորացումն ու կատարելագործումը,
2/ մայրենի և օտար լեզուների պատշաճ իմացությունը,
3/համակարգչային հմտություններին, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետումը, էլեկտրոնային ուսուցման տարրերի իմացությունը,
4/հաղորդակցության կարողությունների, աշխատանքի ծրագրման, կազմակերպման, կատարման, թիմային աշխատանքի ունակությունների զարգացումը,
5/ ցանկացած իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու, արագ որոշումներ կայացնելու, բանակցելու և այլ գործնական հմտությունների շարունակական զարգացումը:
14. Համալսարանը ուսանողների և շրջանավարտների կարիերայի հնարավորությունները զարգացնելու նպատակով սույն հիմունքներին համապատասխան խրախուսում է նրանց ինքնակրթությունը, կամավորական աշխատանքները, հասարակական ակտիվությունը, ԳՊՀ կառավարման և ուսանողական ինքնակառավարման մարմիններում ներգրավվածությունը, կարիերայի կենտրոնի ծրագրերին մասնակցությունը, տարբեր նախաձեռնությունների իրականացումը: